

Հայտարարություն

Հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի ընդունելություն

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանը հայտարարում է 2024-2025 ուսումնական տարվա նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցմամբ, հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի ընդունելություն հետևյալ մասնագիտությունների գծով՝

- Գ.00.04 «Կենսաքիմիա»՝ 1 տեղ
- Ժ.00.03 «Ներքին հիվանդություններ»՝ 1 տեղ
- Ժ.00.07 «Նյարդաբանություն, հոգեբուժություն և թմրաբանություն»՝ 1 տեղ
- Ժ.00.10 «Ախտաբանական և նորմալ ֆիզիոլոգիա»՝ 1 տեղ

Մրցույթին կարող է մասնակցել մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող, ինչպես նաև կլինիկական օրդինատուրայի շրջանավարտ կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող բժիշկ-մասնագետը:

Քննությունները մասնագիտական առարկաներից կազմակերպվելու են սեպտեմբերի 17-ից մինչև սեպտեմբերի 24-ը:

Փաստաթղթերն ընդունվում են յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 10:00-17:00-ն, օգոստոսի 26-ից մինչև սեպտեմբերի 13-ը ներառյալ, ք. Երևան, Կորյունի փողոց 2, ԵՊԲՀ Գիտության վարչություն: